Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ս. Հակոբյան

28.08.2022թ.

Տարեկան աշխատանքային պլան

Ափնայի միջնակարգ դպրոցի

Դաստիարակչական Աշխատանքների Կազմակերպիչ՝

Հ.Այվազյան

2022-2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի առօրյան հագեցած է աշխատանքային ծանրաբեռնվածությամբ,սովորողների հանդեպ ունեցած ջերմ սիրով ու նվիրումով,սովորողների մեջ ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձրացնելու,բարոյական հատկանիշներ ձևավորելու նպատակով դասավանդումը ճիշտ կազմակերպելով:Դպրոցի յուրաքանչյուր մանկավարժ պարտքի զգացումով է կատարում սերնդի ձևավորման իր վեհ պարտականությունը:

Մեր նպատակն է՝

- *Ապահովել սովորողների կրթության և դաստիարակության համար անվտանգ միջավայր:*
- *Ձևավորել սովորողների մտավոր,հոգևոր,ֆիզիկական,իմացական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:*

2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Հ/հ	*Բովանդակություն*	*Կատարման ժամկետ*	*Պատասխանատու անձ*	*Նշումներ*
1.	Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում	01.09.2022թ.	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ	
2.	Դասասենյակների բաշխում և նախապատրաստում նոր ուսումնականտարվան	25.08.-30.09.22թ.	Դասղեկներ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ	
3.	Բոլոր դասարաններում ,միջանցքներում,սանհանգույցներում տեղադրել համապատասխան ախտահանիչ նյութեր՝ձեռքերի և մակերեսների ախտահանման համար	25.08.-30.09.22թ.	Տնօրեն, դասղեկներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ	
4.	Համադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում	Ըստ ժամանակացույցի	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ	
5.	Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կազմակերպել և անցկացնել ծնողական խորհրդի ընդհանուր ժողով՝ ամրապնդելով աշակերտ-դպրոց-ընտանիք կապը	Ըստ ժամանակացույցի	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ	
6.	Աջակցել դպրոցի ինքնավարությանը՝ 1.Դասարանական խորհուրդների ձևավորում 2.Աշակերտական խորհրդի ձևավորում 3.Աշակերտական խորհրդի հանձնախմբերի ձևավորում	Սեպտեմբեր	Դասղեկներ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ	
7.	Կազմակերպել և անցկացնել աշակերտական խորհրդի նախագահի և ընտրական հանձնախմբի անդամների ընտրություններ:	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ , ԴԱԿ	

8.	Կազմել և հաստատել ուսուցիչների հերթապահության գրաֆիկը՝ մուտքերի մոտ և հարկաբաժիններում:	01.09-10.09.2022թ	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ	
9.	Աշխատանքային կարգապահությունը բարձր հիմքերի վրա պահելու նպատակով . Սահմանված կարգի համաձայն՝ 1.Յուրաքանչյուր սովորող և աշխատող դպրոցում լինի դասերը սկսվելուց 20 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով՝ <<Ներքին կարգապահականկանոնները>>	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ	
10.	Վերահսկողություն սահմանել ուշացումների և անհարկի բացակայությունների նկատմամբ:	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
11.	Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և Կանոնների ապահովման ուղղությամբ:	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ	
12.	Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ	
13.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը՝ հետևելով ԿԳՄՄՆ-ի սահմանած կանոններին:	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ ԾԽ ԱԽ	
14.	Կազմակերպել աշակերտների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեություն	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Դասղեկներ	

			ԴԱԿ/ ԾԽ	
15.	8-9-րդ դասարաններում կազմակերպել և անցկացնել բանավեճեր, քննարկումներ, որոնք կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԾԽ ԱԽ	
16.	Անկախության 31-ամյակին նվիրված շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում և համադպրոցական միջոցառման կազմակերպում:	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ Կերպարվեստի ուսուցչուհի	
17.	44-օրյա պատերազմի զոհված հերոսների հիշատակի օր	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ	
18.	Նանսենյան օրեր. ✓ անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված մեծ մարդասեր Ֆ.Նանսենին ✓ շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում ✓ այցելություն Նանսենի անվան թանգարան և պուրակ	Հոկտեմբեր 1-11	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ ԱԽ	
19.	Համագործակցություն ոստիկանության անչափահասների գործերով համապատասխան աշխատակցի հետ:	Ըստ անհրա-ժեշտության	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԾԽ	
20.	Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում / առցանց և առկա / անցկացվող դասընթացների և այլ աշխատանքների:	Ըստ անհրա-ժեշտության	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ԱԽ	
21.	Երեխաների իրավունքների և պարտականությունների	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	

	քննարկում և լուսաբանում: /դասղեկի ժամերին/		ԴԱԿ Դասղեկներ	
22.	Կազմակերպել միջոցառումներ՝ /առցանց և առկա/ հաշվի առնելով աշակերտների նախաձեռնությունները,ստեղծ ագործական տաղանդը և պահանջմունքները:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
23.	Ուսուցչի տոնին նվիրված միջոցառումներ՝ • շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում • ԱԽ-ի կողմից անակնկալ՝ նվիրված դպրության ջատագովներին	Հոկտեմբերի 5	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
24.	Դպրոցի բուժքույրերի կողմից իրականացվող զրույց-քննարկում՝ սանիտարահիգիենիկ պահանջների, հակահամաճարակային կանոնների պահպանման, ինչպես նաև անձնական հիգիենայի վերաբերյալ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Բուժքույրեր	
25.	Հայոց բանակին նվիրված՝ • շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես • համադպրոցական միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի ստեղծման 31-ամյակին	Հունվար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
26.	Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյանը նվիրված միջոցառումներ՝դասղեկական ժամեր և թումանյանական դասաժամեր	Փետրվար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ ԱԽ	
27.	Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ: Ընթերցանության ժամ /ընթերցում են բոլորը/: Գրական-երաժշտական	Փետրվար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Ուսուցիչներ	

	միջոցառում:		Դասղեկներ	
28.	Ստեղծել և ապահովել դրական հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալ յուրաքանչյուր աշակերտին ազատ արտահայտելու իր զգացմունքներն ու կարծիքները՝ զարգացնելով քննադատական մտածողությունը:	Պարբերա-բար	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
29.	Ուսումնասիրել աշակերտների կյանքի առաջնային և բարոյական արժեքները:Անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված բարոյական նորմերի պահպանմանը և զարգացմանը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
30.	Այլազգի աշակերտների հետ ուսումնասիրել իրենց երկրի, աշխարհի ժողովուրդների,իրենց ընտանիքների և դպրոցի ավանդույթները /առցանց և առկա/:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
31.	Բոլոր ուսումնադաստիարակչական միջոցառումներն ուղղել մարդասիրական, պաշտպանված և անվտանգ միջավայրի ստեղծմանը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
32.	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության բարելավման ուղղությամբ:Կազմակերպել միջոցառումներ գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով /առցանց և առկա/:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
33.	Իրականացնել աշխատանքներ աշակերտների հայրենասիրական, գեղագիտական, ֆիզիկական, հոգևոր, բարոյական,	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	

	աշխատանքային, քաղաքացիական դաստիարակության ուղղությամբ:			
34.	Աշխատանք տանել աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Հոգեբան Դասղեկներ	
35.	Նպաստել և հետևողական աշխատանք տանել ազգային փոքրամասնությունների, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքների իրականացման ուղղությամբ /կազմակերպել միջոցառումներ/:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	
36.	Վերջին զանգի միջոցառման կազմակերպում	Մայիս	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	